

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1003<sup>1</sup>-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. Ելնելով «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1003<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով լրացուցիչ նյութերի ուսումնասիրման անհրաժեշտությունից, գործի դատաքննությունը հետաձգել և այն սկսել 2011 թվականի հունիսի 14-ին, ժամը 11.00-ին:

2. Վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի ՍԴԱՈ-115 աշխատակարգային որոշման 3-րդ կետը, և, գործի համակողմանի քննության ու կողմերի դիրքորոշումների ամբողջական բացահայտման անհրաժեշտությունից ելնելով, գործի դատաքննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով:

3. Սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանի նիստին հրավիրել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով նախատեսված՝ պետական իշխանության մարմինների ներկայացուցիչներին, որոնց նախապես տրամադրվել են քննվող գործին վերաբերող նյութերը՝ սահմանադրական դատարանի հարցերին պարզաբանումներ տալու անհրաժեշտությունից ելնելով:

4. Հանձնարարել սույն գործով զեկուցող՝ սահմանադրական դատարանի անդամ Ա. Խաչատրյանին՝ 15-օրյա ժամկետում սահմանադրական դատարանի անդամներին տրամադրել ամփոփ տեղեկանք սույն հիմնահարցի կարգավորման միջազգային իրավական պրակտիկայի վերաբերյալ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

29 ապրիլի 2011 թվականի  
ՍԴԱՈ-32